



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

4 փետրվարի 2019թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Հ. Նազարյանի

Անդամակցությամբ՝ Ա. Դիլանյանի

Ֆ. Թոխյանի

Ուսումնասիրելով Ելենա Պողոսյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝ Ելենա Պողոսյանը 18.01.2019 թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, «սահմանված ժամկետը» եզրույթի մասով, բավարար չափով որոշակի չլինելու, ինչպես նաև իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ, 79-րդ և 81-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 2-րդ մասը, 158-րդ հոդվածի 5-րդ մասը և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի

«բ» կետը, բավարար չափով որոշակի չլինելու, ինչպես նաև իրավակիրառական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ, ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ, 79-րդ և 81-րդ հոդվածներին հակասող և անվավեր»:

2. Դիմողը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված «սահմանված ժամկետը» եզրույթը՝ Վճռաբեկ դատարանի կողմից իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ կամ հենց այդ իմաստն ունենալու փաստով, հակասում է ՀՀ Սահմանադրության 61 և 79-րդ հոդվածներով սահմանված և երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքին և իրավական որոշակիության սկզբունքին, քանի որ դրանից ուղղակիորեն չի բխում, որ դրանում նշված՝ «սահմանված» ժամկետը վերաբերում է ոչ թե Վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ սահմանված ժամկետին, այլ օրենքով նախատեսված՝ վճռաբեկ բողոք բերելու համար օրենքով սահմանված մեկամսյա ժամկետին:

Անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 2-րդ մասի, 158-րդ հոդվածի 5-րդ մասի և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի «բ» կետի իրավակարգավորումներին՝ դիմողը նշում է, որ դրանք «...հակասում են իրավական որոշակիության սկզբունքին և դատարանի մատչելիության իրավունքին», քանի որ դատական պաշտպանության համար դիմած անձանց համար անհամաչափ և չհիմնավորված պարտականություն են սահմանում:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ դատական կազմը գտնում է, որ Սահմանադրական դատարանի կողմից վրոհիշյալ անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ: Մասնավորապես, դիմողը չի պահպանել Սահմանադրական դատարան դիմելու համար օրենսդրությամբ սահմանված ժամկետը: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումները Սահմանադրական դատարան կարող է ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձը դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառելուց՝ վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան վեց ամիս հետո:

Ինչպես վկայում է դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը, դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը, ի դեմս Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հունիսի 27-ի՝ վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշման, օրինական ուժի մեջ է մտել կայացման պահից՝ համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումների, իսկ Վճռաբեկ դատարանի նշյալ ակտը կայացվել է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքն ուժի մեջ մտնելուց հետո: Հետևաբար, դիմողի համար Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված ժամկետի հաշվարկը պետք է կատարվի «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման շրջանակներում, համաձայն որի՝ անհատական դիմումները կարող են Սահմանադրական դատարան ներկայացվել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառվելուց՝ **վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան վեց ամիս հետո:** Տվյալ դեպքում, դիմողի համար Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված ժամկետն ավարտվել է 2018 թվականի դեկտեմբերի 28-ին, մինչդեռ դիմողի դիմումը փոստային ծառայությունում մուտքագրվել է 2019 թվականի հունվարի 16-ին: Հետևաբար, դիմողը չի պահպանել Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված վեցամսյա ժամկետը:

Սահմանադրական դատարանում դատական պաշտպանության իրավունքն անձն իրացնում է Սահմանադրության և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով նախատեսված կարգով՝ ելնելով նաև Սահմանադրական դատարանում գործերի քննության ու լուծման առանձնահատկություններից: Միաժամանակ, Սահմանադրական դատարանում դատական պաշտպանության իրավունքը, ինչպես նաև դրա իրացման՝ օրենքով նախատեսված ընթացակարգային կանոններն ինքնանպատակ չեն և չեն կարող հայեցողաբար մեկնաբանվել, քանի որ դրանց իրացումը ենթադրում է կոնկրետ իրավական գործընթացներ, որոնք պայմանավորված են դրանց մասնակից սուբյեկտների փոխադարձ իրավունքներով ու պարտականություններով: Ուստի, դիմողը Սահմանադրական դատարանում պարտավորված է կատարել այնպիսի գործողություններ (այդ թվում՝ նախ դիմում ներկայացնելիս), ինչպիսիք

Նախատեսված են Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանված կանոններով:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Ելենա Պողոսյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝



4 փետրվարի 2019 թվականի
ՍԴԴԿՈ-5